ՓՄՁ ոլորտի զարգացման բարենպաստ միջավայրի ստեղծմանն ուղղված առաջարկություններ

Համահամայնքային քննարկումներ
Հայաստանի Հանրապետության
ՓՄՁ ոլորտի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝
Երևան քաղաքում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացնում է «Հայկական բիզնես կոալիցիան»՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Հայկական բիզնես կոալիցիան», և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում են «Հայկական բիզնես կոալիցիայի», տեսակետներն ու կարծիքները:

Երևան-2018

Ներածություն

2018թ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ՓՄՁ զարգացման նոր՝ 2019-2021թթ. ռազմավարության մշակումը, որին որպես աջակցող փաստաթուղթ անհրաժեշտ է համարվել իրականացնել ՓՄՁ ոլորտի ուսումնասիրություն՝ անդրադարձ կատարելով ՓՄՁ կարիքներին, բարեփոխումների հնարավոր ուղղություններին և մինչ այժմ գրանցված արդյունքներին:

Այս կապակցությամբ «Հայկական բիզնես կոալիցիան» ԵՄ ֆինանսավորմամբ և «Իրավաբանների հայկական ասոցիացիայի» ղեկավարությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կողմից տրված ենթադրամաշնորհով «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում նախաձեռնել և իրականացրել է հետազոտություն՝ նպատակ ունենալով տրամադրել փաստագրական հիմք՝ ՓՄՁ նոր ռազմավարության մշակման և հետագա բարեփոխումների իրականացման համար, ինչը կնպաստի ՓՄՁ ոլորտի կայունության բարձրացմանը և գործունեության համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը:

Հետազոտության արդյունքները ներկայացվել, ապա համահամայնքային քննարկումների ձևաչափով քննարկվել են ոլորտի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ 2018թ-ի դեկտեմբերի 20-ին՝ Երևանում:

Իրականացված քննարկման արդյունքում ՓՄՁ զարգացման 2019-2023թթ. ռազմավարության մշակմանն ուղղված առաջարկությունների ամփոփ տարբերակը ներկայացված է ստորև:

Ձեռնարկատիրական մշակույթի զարգացում

- Ձեռնարկատիրոջ կերպարն այսօր Հայաստանում չունի միանշանակ դրական ընկալում: Ձեռնարկատիրական մշակույթի զարգացման շրջանակներում առաջարկվում է ռազմավարությունում ուշադրություն դարձնել ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը՝ սկսած դպրոցական տարիքից: Ձեռնարկատերը Հայաստանում պետության և հանրության կողմից պետք է ոչ թե «մեղավորության կանխավարկածով» ընկալվի որպես օրինախախտ, այլ «արժեք ստեղծող»:

- Ձեռնարկարտիրական մշակույթի զարգացման ուղղությամբ առաջարկվում է ձեռնարկատերերի շրջանում խրախուսել ծրագրային ապահովումների կիրառությունը կառավարման հետ կապված տարբեր հարցերում և խթանել բիզնեսի ավտոմատացմանն ուղղված միջոցառումները, ինչը կնպաստի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և թղթարարության նվազմանը:
- Առաջարկվում է իրականացնել ՓՄՁ սուբյեկտների իրազեկման միջոցառումներ, բարձրացնել ՓՄՁ-ների իրազեկվածությունը և կարողությունները մարքեթինգի, հեղինակարային իրավունքների պաշտպանության, ֆինանսական գործիքների, սոցիալական ձեռնարկատիրության ոլորտներում:

Ֆինանսավորության հասանելիություն

- Բիզնեսի ֆինանսավորման դժվարությունները կապված են վարկային պատմությունների հետ, որի դեպքում մի կողմից կան ձեռնարկատերեր, ովքեր ունեն վատ վարկային պատմություն, մյուս կողմից նոր ձեռնարկատերերը չեն կարողանում ներգրավել վարկային միջոցներ վարկային պատմություն չունենալու պատճառով: Այս դեպքերում առաջարկվում է, որ պետությունը հանդես գա որպես երաշխավոր կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման հարցերում՝ իր վրա վերցնելով ռիսկերը:
- Մեկ միասնական բաց և հասանելի հարթակի միջոցով ՓՄՁ-ների տրամադրվող դրամաշնորհային և այլ ֆինանսական աջակցության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովում, ՓՄՁ-ներին դրամաշնորհային ծրագրերին դիմելու հարցում տեխնիկական աջակցության տրամադրում և կարողությունների զարգացում: Առաջարկվում է նաև բարձրացնել տրամադրվող գրանտային ծրագրերի թափանցկությունը:

ՓՄՁ դասակարգում եվ վիճակագրություն

- Առաջարկվում է հաստակեցնել «գերփոքր», «փոքր» և «միջին», ինչպես նաև «սկսնակ» բիզնեսները տարաբաժանող չափորոշիչները, ինչպես նաև ըստ այս չափորոշիչների իրականացվող պետական աջակցության քաղաքականությունը, որպեզի առավելագույնս արդունավետ օգտագործվի սկսնակ և փոքր բիզնեսին տրվող աջակցությունը: Ըստ ՓՄՁ սահմանման

«միջին» բիզնեսն իրականում չափերով խոշոր է և, օգտվելով պետական աջակցությունից, փոշիացնում է չափերով գերփոքր ու փոքր և իրականում աջակցության կարիք ունեցող բիզնեսին տրվող աջակցությունը: Առաջարկվում է աջակցությունն առավելապես ուղղել «գերփոքր», «փոքր» և սկսնակ բիզնեսին՝ նվազեցնելով «միջին» բիզնեսին ցուցաբերվող աջակցությունը: Առաջարվում է հստակեցնել նաև Սոցիալական Ձեձնարկատիրության սահմանման օրենսդրական չափորոշիչները

- Բիզնեսի «գերփոքր», «փոքր» և «միջին» տարաբաժանումները օրենսդրական դաշտում չունեն կիրառական նշանակություն, քանի որ պետական քաղաքականությունը, ինչպես օրինակ հարկային քաղաքականությունը, չի առաջնորդվում այս տարաբաժանմամբ: Անհրաժեշտ է այս տարաբաժանումը դարձնել կիրառելի, ինչը կօգնի բարելավել պետական քաղաքականության հասցեականությունը: «Գերփոքր», «փոքր» և «միջին» տարաբաժանումները կդառնան նշանակալի, եթե պետական քաղաքանությունը մշակելիս այս տարաբաժանումները հաշվի առնվեն: Ներկայումս պետական քաղաքականությունն իրականացվում է սեգմենտավորված և ներառում է որոշակի ոլորտներ՝ դուրս թողնելով մյուսները:
- Առաջարկվում է ընդլայնել վիճակագրական տվյալների հավաքագրման շրջանակը՝ ներառելով ՓՄՁ-ների փակման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ինչը հնարավորություն կտա հասկանալ, թե ինչպիսին է ՓՄՁ-ների կենսունակությունը, որքանով է կարողանում «գերփոքր» բիզնեսը դառնալ «փոքր», որոնք են այս ճանապարհին խոչընդոտ հանդիսացող գործոնները:
- Առաջարկվում է ՓՄՁ ռազմավարությունում ներառել մոնիտորինգային չափորոշիչ այն մասին, թե «գերփոքր» բիզնեսի քանի տոկոսն է դարձել «փոքր» և այս նպատակադրումը դարձնել ռազմավարության առանցքներից մեկը:

Պետություն-մասնավոր հատված երկխոսություն

- ՓՄՁ նոր ռազմավարությունում սահմանված ռազմավարական նպատակները պետք է լինեն առավել թիրախային ու նեղ և համահունչ լինեն պետության կողմից իրականացվող առավել երկարաժամկետ նպատակներին:
- Առաջարկվում է խորացնել պետություն-մասնավոր հատված երկխոսությունը, այդ երկխոսության համար նախատեսված հարթակները

և կապը մասնավոր հատվածի հետ հատկապես օրենսդրական փոփոխությունների և կանոնակարգերի վերանայման հարցերում:

- Մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներում առաջարկվում է խրախուսել գործարարների ակտիվ ներգրավվածությունը: Մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը նույնպես պետք է ներառեն ձեռնարկատիրական մշակույթի զարգացմանն ուղղված ծրագրեր և դրույթներ: